նմին հետ հետզհետէ եղել են վերանորոգութիւններ առանձին տրօք բարեպաշտ ժողովրդոց Նուխւոյ, բայց սենեակներն այնպէս կիսակատար մնում էին, յորս իջեւանելոյ հնար չկար, ուստի և մեծ նեղութիւն էր լինում սրտեռանդն ուխտաւորաց մանաւանդ անձրեւային ժամանակներում։

Այս (անցեալ) 1874 թուականում, Վրձակիս Ցաջորդն՝ ձեռն զարկեց նորոգել այս վանքի սենեակների շինութեանց թերութիւնները։ Նախ հրաւիրելով իւր մօտ գիւղքինները, պատուիրեց ու սրտառուչ խրատական բաներ խօսելով՝ յորդորեց նորանց որ ամեն մէկն վանքի սենեակների լուսամուտների համար՝ մէկ հատ երկաթակապ վանդակ շինեն ի յիշատակ կենդանեաց և ննջեցելոց իւրեանց. ամենն ուրախութեամբ յարգելով Վարդապետի այսօրինակ առաջարկութիւնը կատարեցին։ Այնուհետեւ շարունակաբար միւս արհեստաւորները հրաւիրեց։ Այս կերպով՝ փառք Աստուծոյ՝ կարճ միջոցում պատրաստելով շինութեան բոլոր պարագաներն, և այլ ծախուց համար էլ գումար դրամոց՝ անձամբ կանգնելով և հսկելով՝ վերջացրեց աւելացնելով նորոգ շինութեանս գեղեցկութիւնը՝ տախտակամած դօլով և այլովք՝ նա և վերանորոգելով արեւմտեան և հիւսիսային կողմերի պարիսպները։ — Նորոգեալ սենեակներն են երեք։

Քաղաքում վաճառականութեամբ պարապող Գողթան գաւառեցի Հանդամէջ գիւղեցի պարոն Գրիգոր Մկրտչեանն ևս՝ յիշեալ Ցաջորդէն խրախուսելով՝ Գիսու վանքին մի ճաշոց նուիրեց՝ ի յիշատակ ծնողաց իւրոց։

Արդի Ցաջորդ՝ յորէ մուտ գործելոյ ի պաշտօնն՝ — ի 1871 — ցայսօր թէև շատ աշխատութիւններ ունի, թէ վանօրէից բարեկարգութեան վրայ, և թէ ուսումնարանաց ապառիկ արդեանց հոգատարութեանց համար, որոնց ժողովմանը յոյս չկար, բայց նոցա ոչ մէկն այնքան զգալի չերեւում հասարակութեան աչքին, որքան Գիսու վանուց սենեկաց նորոգման համար արած ջանքն։

Վասն որոյ՝ Նուխւոյ հասարակութեան բարեմիտ անձինքներն՝ իւրեանց խորին շնորհակալութիւնը մատուցանելով յիշատակեալ Փոխանորդին, և նորին ձեռնտու ազգաշէն անձանց՝ ներկայ շինութեան մասին, ամենախոնարհաբար խնդրում են Ձեր արդարախօս ամսատետրակի միջոցաւ հրատարակել այս ի գիտութիւն համազգայնոց մերոց, ի խրախուսութիւն աշխատակից վարդապետին, և ի բարի նախանձ այլոց։

Ց. ՄՆԼՔՈՆԵԱՆՑ.

Ց 30 Դեկտ. 1874 ի
Ի Նուխի.

## ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՅՈՑ ԹԵԼԱՒԻ.

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ·

Մէկ նաւի ղեկավարը՝ թէ որ ունենայ քաջ հմտութիւն ծովագնացութեան, և հողմոց բնութենէն անվեհեր սիրտ, անկասկած նա կարող է գազանացեալ ալեաց զօրութիւնքը խորտակելով ուղղել իւր նաւը դէպ ի նաւահանգիստ. այսպէս եթէ մի ժամանակէ հետէ մեր ազգի ղեկավարները ունենային քաջ հմտութիւն ազգի կառավարութեան, մեր ազգը ի վաղուց պիտի նմանէր և հաւասարուէր ուսումնական յառաջադիմութեամբ և բարւոքեալ վիճակով Եւրոպական լուսաւորեալ ազգաց հետ. սակայն ցաւօք սրտի պէտք է ասենք՝ որ մեր ազգը ըստ մեծի մասին նոր կամի ոտք դնել ցանկալի ուսման այն աստիճանին՝ որոյ ծայրը արդէն հասել են Եւրոպական ինչ ազգերը։ ազգիս և այն յառաջադիմութիւնն էլ՝ գլխաւորապէս է անձնազոհ աշխատութեամբ և քաջահմուտ կառավարութեամբ Հայրենեաց վերանորոգիչ Գէորգ Դ. Կաթուղիկոսի, որ այնպիսի միջոցներով և այնպիսի հնարքներով կաշխատի մտաւորական և բարոյական յառաջադիմութիւնը ազգի մէջ տարածել, որ և օտար ազգերին անգամ նախանձելի է եղած, որոնց շատերէ լսած են վերոյիշեալ արթուն և հմուտ կառավարութեան վերայ մեծ գովեստներ։ Մեր Վեհափառ Հայրապետի հմուտ կառավարութեան կարեւոր մասերէն մէկն էլ ուսումնականն է, որոյ համար հաստատել է վիճակների մէջ՝ վիճակաւորներին աջակից Թեմական վերատեսուչներ, որոց միայն պաշտօնը է ուսումնարանների բարեկարգութիւնը։ Արդարեւ այս կարգադրութիւնը մեծ նշանակութիւն տուաւ ուս-

մեն յառաջադիմութեանը ազգիս մէջ, ինչպէս Վրաստանի Հայոց Թեմական վերատեսուչը՝ աշխատասէր և ուսումնագէտ անձն գոլով՝ անդադար կաշխատի՝ այս վիճակի բոլոր դպրոցների կատարելութիւնը այլ և այլ եղանակաւ բարեկարգել, որոց մէջ է Թէլաւի համար ևս արածը։ Նա գալով Թէլաւ անցեալ 74 թուականի դեկտ. 2ին, տեսնելով դպրոցաց արդեանց սակաւութիւնը՝ ըսկսաւ Մայր եկեղեցւոյ մէջ մեծահանդէս պատարագից յետոյ Վրաց լեզուաւ խիստ ազդու քարոզ խօսիլ և ապա հրաւիրել ժողովուրդը ի Դպրանեան ուսումնարան ստորագրել նուէր յօգուտ երկսեռ դպրոցաց, Թէլաւի հայ ժողովրդականք թէ և շատ բարեպաշտական և ազգասիրական յատկութիւններ ունին, սակայն ուսման յարգը և նշանակութիւնը նոցա մէջ ուշ մուտ գործելով՝ փարագուրված էր ցարդ նոցա բարի յատկութիւնները. վասն որոյ տեսնելով պատճառը, ցոյց տուին և նոքա էլ իրանց բարի և ազգասիրական յատկութիւնները. Թէլաւի հայոց գործակատար լինելով Գէորգ աւագ քահանայն Տ. Սարգսեանց, կամեցաւ այսպիսի բարենպատակ գործքի մէջ սիրտ տալ իւր համքաղաքացի ժողովրդոց, վասն որոյ նուիրեց երկու հարիւր ռուբլի յօգուտ երկսեռ դպրոցաց քաղաքիս, որին հետևելով բարեկրօն քահանայք և բարեպաշտ ժողովրդականք՝ ցոյց տուին արդարև իրանց առատանուէր ստորագրութեամբ ազգասիրութիւնը և ուսումնասիրութիւնը, որ և ի նոյն օրէ՝ այս ինքն դեկտ. 8էն ցայսօր ստորագրուած գումարն հասած է 2265 ռուբլոյ և ստորագրութիւնը դարձեալ կշարունակէ բարեկրօն գործակատարին.

Հայոց լեզուի ուսուցիչն էլ Մայր Աթոռոյս թանգարանէն չորս հատ տպեալ Դանիէլի թերթը բերել տուած լինելով, սովորեցուցած էր չորս օրիորդաց Դանիէլի ընթերցանութեան ձևը, որոնք ամսոյս 5ին երեկոյեանը սկսան պարզ մաքուր և հայացի արտաբերութեամբ կարդալ քաղաքիս աւագ եկեղեցւոյ մէջ, որ այն աստիճան ներգործեց ժողովրդոց սրտերը, որք թախանձեցին վերոյիշեալ գործակատարից պատրաստել տալ Յարութեան ճրագալուցի երեկոյեան համար՝ Հայոց երեք եկեղեցեաց մէջ ևս նոյնգունակ «Դանիէլի» կարդացողներ, որպէս զի բոլոր հասարակութիւնը ևս այն հոգևոր մխիթարութիւնը տեսնեն, զգան և նկատեն իրանց զուրկ լինելը այն ճոխ և քաղցրաբարբառ Հայկական լեզուագիտութենէն՝ ևս և ուսումնագիտութենէն, որով և դարձեալ իրախուսուին իւրեանց որդւոց յառաջադիմութեանց համար՝ յամենայն դէպս ուրախ սրտիւ անձնանուէր լինիլ։

Դ. ԳՐԻԳՈՐ Տ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆՑ.

8 Յունվ. 1875.
Ի Թէլաւ.

---

## ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՏՈՒԹԻՒՆ ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ Ի 1874 ԱՄԻ.

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց ծխական երկսեռ հոգևոր դպրոցաց ընդ սմին առաքելով ի Խմբագրատուն Արարատ ամսագրոյ զհամառօտ հաշուեցուցակ մտից և ծախուց երկսեռ դպրոցաց վասն 1874 ամի, խոնարհաբար խնդրէ ի լոյս ածել տպագրութեամբ յէջս ամսագրոյ յընդհանուր տեղեկութիւն ամենասիրելի համազգայնոց.

Հոգաբարձուք Յովսէփ Աւագ Քահանայ Քունիաթեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Սիմէոն Պօպօվեանց
Սարգիս Բուրջալեանց

| | Ռ. | Կ. |
|---|---|---|
| Մնացորդք ի 1873 թուականէ՝ | | |
| Մի դրամատոմսակ փաճառականական Դրամատան Աստրախանայ տուեալ յ2 սեպտեմբերի 1872 ամի համար 2017. գումարաւ . . | 1000 | |
| Մի դրամատոմսակ Քաղաքային Հասարակական Դրամատան Աստրախանայ, տուեալ ի 1 Նոյեմբերի 1873 ամի համար. 66. գումարաւ . . | 1200 | |
| Երկու դրամատոմսակք առաջին և երկրորդ նըրքին փոխառութեան 1864 և 1866 ամաց, համարօք սերիից 09548. և 12073. և տոմսակաց 1. և 37 գումարաւ. . . . | 315 | |
| Պատրաստի դրամք . . . | 52 | 63 1\4 |
| | 2567 | 63 1\4 |